ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-076-27.10.2021-ՊԻ-011/0), «ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-076[1] -27.10.2021-ՊԻ-011/0), «ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-076[2] -27.10.2021-ՊԻ-011/0) ԵՎ «ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-076[3] -27.10.2021-ՊԻ-011/0) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ նաեւ՝ Նախագիծ) 1-ին հոդվածում առաջարկում ենք Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաեւ՝ Օրենսգիրք) լրիվ անվանման հիշատակումը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին՝ «Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			վերնագիրը եւ «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն: Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի կրճատ անվանումը հիշատակելիս նշվում է օրենսգրքի վերնագիրը եւ «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն»:		
2.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին, 2-րդ հոդվածներ, «Բանկային գաղտնիքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված, «Ապահովագրության եւ ապահովագրական գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված, «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին»	Նախագծերի փաթեթում անհրաժեշտ է ներառել գաղտնի տեղեկությունները տրամադրելու առնչությամբ նյութական կարգավորումներ որոշակիության եւ համաչափության սահմանադրական սկզբունքների ապահովման նպատակով:	Ընդունվել է: Նախագծերի փաթեթը լրացվել է նոր՝ «ՀՀ հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով:	Ընդունվել է:

		օրենքի նախագծի 1-ին հոդված			
3.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող 31.6-րդ գլխի 222.19-րդ հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերում նախատեսված է հետեւյալը՝ «Սույն գլխով նախատեսված գործերով դիմումը դատարանը քննում եւ գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացնում է դիմումը վարույթ ընդունելուց հետո՝ 15 օրյա ժամկետում: Դատարանը իրավասու է ոչ ավել, քան եռօրյա ժամկետով կասեցնել գործի վարույթը, եթե անհրաժեշտություն է առաջացել լրացուցիչ հանգամանքներ պարզել կամ տեղեկություններ ստանալ: Սույն մասով սահմանված կասեցումը ենթակա չէ բողոքարկման: Դատարանը որոշում է կայացնում գործի վարույթը վերսկսելու մասին, եթե վերացել են կասեցումն առաջացրած հանգամանքները՝ այդ մասին մեկօրյա ժամկետում տեղեկացնելով դիմողին»: Այն հիմքերը, որոնց առկայության պարագայում վարչական դատարանը պարտավոր է կամ իրավունք ունի կասեցնելու գործի վարույթը, սպառիչ	Ընդունվել է: Նախագծով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասում կատարվել է համապատասխան լրացում:	Ընդունվել է:

			կերպով սահմանված են Օրենսգրքի 94-րդ հոդվածում: Տվյալ հիմքերի շարքում, իբրեւ գործի վարույթի կասեցման հիմք, նախատեսված չէ լրացուցիչ հանգամանքներ պարզելու կամ տեղեկություններ ստանալու անհրաժեշտությունը, ուստի տվյալ դեպքում վարչական դատարանն իրավասու չէ կասեցնել գործի վարույթը: Կարծում ենք՝ համապատասխան հանգամանքներ պարզելու կամ տեղեկություններ ստանալու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ վարչական դատարանի կողմից գործի վարույթը առավելագույնը եռօրյա ժամկետով կասեցնելու վերաբերյալ իրավակարգավորում նախատեսելու փոխարեն՝ նպատակահարմար է այդ դեպքում սահմանել գործի քննության ավելի երկար ժամկետ՝ տվյալ ժամկետում անհրաժեշտ հանգամանքների պարզման եւ տեղեկությունների ձեռքբերման համար:		
4.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ	Առաջարկում ենք հարկային մարմնի կողմից դատական ակտը համապատասխան սուբյեկտին ուղարկելը երաշխավորելու վերաբերյալ կարգավորում սահմանել հարկային օրենսգրքում՝ հատուկ	Ընդունվել է: Նախագծերի փաթեթը լրացվել է նոր՝ «ՀՀ հարկային օրենսգրքում	Ընդունվել է:

		կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված	վարույթի շրջանակներում ծանուցման ընդհանուր կանոնի համեմատությամբ այլ ժամկետ նախատեսված լինելու դեպքերում հարկային մարմնի համար սահմանելով այդ ժամկետում ծանուցումն իրականացնելու պարտականություն:	լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով:	
5.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	Նախագծում կիրառվում են «Վարչական դատարան», «վարչական դատարան» եւ «դատարան» հասկացությունները, առաջարկում ենք Նախագծում միեւնույն միտքն արտահայտելիս կիրառել միեւնույն բառերն որոշակի հերթականությամբ՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը՝ «Նորմատիվ իրավական ակտում միեւնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միեւնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
6.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված, «Բանկային	Նախագծի 3-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվում է 31.6-րդ գլուխ, մինչդեռ հարկ է նկատել, որ Օրենսգիրքն արդեն իսկ պարունակում է 31.6-րդ գլուխ, ինչպես նաեւ 222.17-րդ, 222.18-րդ եւ 222.19-րդ հոդվածներ: Ուստի առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածով սահմանված կարգավորումներն Օրենսգրքում լրացնել լրացուցիչ	Ընդունվել է:	Ընդունվել է:

		գաղտնիքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում, «Ապահովագրության եւ ապահովագրական գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծում եւ «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծում	համարներով գլխի եւ հոդվածների տեսքով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 11-րդ մասը: Նշվածով պայմանավորված անհրաժեշտություն է առաջանում Նախագծի 2-րդ հոդվածում, «Բանկային գաղտնիքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում, «Ապահովագրության եւ ապահովագրական գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծում եւ «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծում Օրենսգրքի 31.6-րդ գլխին կատարված հղումները համապատասխանաբար փոխարինելու նախատեսվող լրացուցիչ համարով:		
7.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող 222.19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Եթե չեն պահպանվել սույն օրենսգրքի 222.18-րդ հոդվածի պահանջները, ապա Վարչական դատարանը եռօրյա ժամկետում պատճառաբանված որոշմամբ դիմումը վերադարձնում է՝ նշելով այն դրույթը, որը չի պահպանվել: Դիմումում առկա ձեւական սխալները վերացնելու եւ որոշումը ստանալու օրվանից հետո՝ երկու օրվա ընթացքում, այն վարչական դատարան կրկին	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ներկայացնելու դեպքում դիմումը վարչական դատարանում ընդունված է համարվում սկզբնական ներկայացման օրը»: Վերոնշյալ կարգավորման վերաբերյալ հարկ ենք համարում նշել հետեւյալը. Նախագծի 3-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող 222.18-րդ հոդվածում սահմանված են դիմումին ներկայացվող պահանջները: Վարչական դատարանի կողմից եռօրյա ժամկետում պատճառաբանված որոշմամբ դիմումի վերադարձման դեպքում դրույթի վերաբերյալ պարտադիր նշումը, կարծում ենք, նպատակահարմար չէ այն հանգամանքով պայմանավորված, որ դիմումի վերադարձման ցանկացած դեպքում վարչական դատարանը կարող է հղում անել միայն հոդվածին: Առաջարկում ենք «դրույթը» բառը փոխարինել «պահանջը» բառով, որպեսզի հասկանալի լինի դիմումին ներկայացվող սահմանված ո՞ր պահանջի խախտումն է հիմք հանդիսացել վարչական դատարանի կողմից դիմումի վերադարձման համար, ինչպես նաեւ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նախագծի 3-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող 222.18-րդ հոդվածում սահմանված են դիմումին ներկայացվող պահանջները:		

8.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող 222.20-րդ հոդվածում 4-րդ մասին հաջորդում է 6-րդ մասը: Առաջարկում ենք ապահովել Նախագծի 3-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող 222.20-րդ հոդվածի մասերի համարակալման հաջորդականությունը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
9.	ՀՀ կառավարություն	«Բանկային գաղտնիքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Ապահովագրության եւ ապահովագրական գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի վերնագրերում	«Բանկային գաղտնիքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄ» բառն առաջարկում ենք փոխարինել «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Բանկային գաղտնիքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով կատարվում են մեկից ավելի լրացումներ: Նույն դիտարկումը վերաբերելի է նաեւ «Ապահովագրության եւ ապահովագրական գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրում եւ «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրում կիրառված «ԼՐԱՑՈՒՄ» բառին:	Ընդունվել է:	Ընդունվել է:
10.	ՀՀ կառավարություն	«Բանկային գաղտնիքի մասին» օրենքում լրացումներ	«Բանկային գաղտնիքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին	Ընդունվել է:	Ընդունվել է:

		կատարելու մասին», «Ապահովագրության եւ ապահովագրական գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի 1-ին հոդվածներ	հոդվածում առաջարկում ենք հանել (այսուհետ՝ Օրենք) ձեւակերպումը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Բանկային գաղտնիքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում «Բանկային գաղտնիքի մասին» օրենքին այլեւս հղում չի կատարվում: Նույն դիտարկումը վերաբերելի է նաեւ «Ապահովագրության եւ ապահովագրական գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում եւ «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում նշված (այսուհետ՝ Օրենք) ձեւակերպումներին:		